ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Լ-5 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	-	-	-	-	«Համագործակցության ամրապնդման համար» մեդալ: Մեդալը բաղկացած է երկու մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված ութաթև աստղից: Կախիչը պատրաստվում է թեթև մետաղից և դարձերեսի կողմից ունի հատուկ ամրակ՝ պարգևատրվածի հագուստին ամրանալու համար: Կախիչի վերևի մասի երկարությունը 26 մմ է, ներքևի մասինը՝ 46 մմ, իսկ հաստությունը՝ 1 մմ: Կախիչի վերևի մասի երկարությունը՝ կենտրոնից մինչև ներքևի գագաթը՝ վերից վար 50 մմ է: Կախիչը

						պաստառապատված է մուգ մոխրագույն մետաքսյա 24 մմ լայնություն ունեցող ժապավենով: Ժապավենի մեջտեղով անցնում է դեղին երիզ: Ութաթև աստղը պատրաստվում է նեյզիլբերից, որի տրամագիծը 48,5 մմ է, հաստությունը մոտավորապես՝ 2.5մմ: Աստղի բոլոր նիստերը դեպի կենտրոն ռոմբաձև են: Սկավառակի դիմերեսին պատկերված է Հայաստանի Հանրապետության Ոստիկանության ոսկեգույն ռելիեֆային զինանշանը, որի կենտրոնում ՀՀ Զինանաշանն է ՝ արծնաձածկված եռագույն էմալով : Զինանշանի երկու կողմերում ուռուցիկ ոսկեգույն տառերով գրված են ՝ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ՝ բառերը: Սկավառակի դարձերեսն ունի փայլատ մակերես, որի կենտրոնական մասում կորին զուգահեռ գրված է ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ»» բառերը, իսկ մեջտեղում՝ հորիզոնական ուղղությամբ՝ ««ЗА УКРЕПЛЕНИЕ СОТРУДНИЧЕСТВА»» և ««FOR

					CONSOLIDATION OF COOPORATION»» բառերը: Դարձերեսի ներքևի մասում կա փոքր հարթակ՝ համարակալման համար: Մեդալները պետք է արտադրված լինեն դրոշման ճանապարհով, որը կապահովվի մեդալների բացարձակ միանմանությունը և չափերի նվազագույն շեղումները: Մեդալները դարձերեսի կողմից կրում են արտադրողի անվանանիշը՝ հետագա կեղծումներց խուսափելու համար: Տուփի բնութագիրը՝ Թավշապատ, կրծքանշանը տուփի մեջ տեղակայելու հարթակով, չափերը՝ մոտ 120*130*47:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/L-5 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					